ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N__5-__Ա **«08» հուլիս 2025թ.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայություն) և «Աքսել» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 08.04.2025թ.-ին՝ կնքվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/31-1» ծածկագրով գնման պայմանագիր (Այսուհետև՝ Պայմանագիր)՝ «ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կարիքների համար ապրանքներ մատակարարելու վերաբերյալ», որի ընդհանուր գումարը կազմել է 1.466.400 ՀՀ դրամ: Պայմանագրի կատարման ընթացքում Կատարողի կողմից թույլ են տրվել պայմանագրի պարտադիր պայմանների խախտումներ, մասնավորապես.

Ըստ պայմանագրի, «Աքսել» ՍՊԸ-ն պարտավորվել է, մինչև 2025թ.-ի մայիսի 26-ը մատակարարել աթոռ 80 հատ և նստատեղ 30 հատ, սակայն մատակարարումներ չի իրականացրել: Արդյունքում՝ «Աքսել» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել պայմանագրային պարտավորությունների խախտում՝ խախտվել է ապրանքների մատակարարման ժամանակացույցը, ուստի ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությունը **2025թ.-ի հունիսի 24-ին, միակողմանի ամբողջությամբ լուծել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «Աքսել» ՍՊԸ-ի միջև 08.04.2025թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/31-1» ծածկագրով պայմանագիրը՝ 1.466.400 (մեկ միլիոն չորս հարյուր վաթսունվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամի չափով:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Աքսել» ՍՊԸ-ն, սահմանված ժամկետում չի վճարել որակավորման և պայմանագրի ապահովման գումարներն, ուստի համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի ա/ ենթակետի՝ «Աքսել»ՍՊԸ-ին պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 2-րդ մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքի առկայությունը՝ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին՝ «Աքսել» ՍՊԸ-ին, ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի ծածկագիրը	Պայմանագրի					Պայմանագրի կողմի /մատակարար, կատարող, կապալառու/			Պայմանագրի անվանումը	Պայմանագիրը Լուծելու վերաբերյալ Ծանուցումը Հրապարակելու Ամսաթիվը	Իրավական հիմքը	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
	Ծածկագիրը	Չափա բաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափաբաժնի գնման գինը /ՀՀ դրամ/	Չափաբաժնի գինը /ՀՀ դրամ/	Անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/31	ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/31-1	1	Աթոռ	960000	866400	«Աքսել» ՍՊԸ	02918838	ք. Երևան, Թումանյան 8	ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն	24.06.2025թ.	Պայմանագրի 2.1.7 կետը	-
		14	Նստատեղ	1050000	600000							

ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ